«…Այդ օրը մերժում էր ստացել նաև մի հայ ընտանիք… Հայրը առաջինն էր եկել Բելգիա, մի 2 ամիս ստացել չարաբաստիկ մինիմաքսը (սոցիալական նպաստ 21.000 ֆրանկ), ոգևորվել ու կանչել էր ընտանիքին: Ճանապարհածախսն ապահովելու համար հորդորել էր կնոջը վաճառել Երևանի տունը, քանի որ, ըստ նրա, «մի կես տարում փողը կհանեին»: Ընտանիքի ժամանելուց 1 ամիս հետո մերժում էր ստացել հայրը, 2 ամիս հետո՝ ամբողջ ընտանիքը…»:

Ծրագիրը ֆինանսավորում են Հայաստանում Իտալիայի դեսպանատունը և Իտալական Կարիտասը

caritas italiana
organismo pastorale della CEI

Ծրագիրն իրականացվում է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից

«Հայկական Կարիտաս»-ի
կենտրոնական գրասենյակ՝
ք. Գյումրի, Սարգսյան փ.,
նրբանցք 3, տուն 8
Հեռախոս (+37441) 37-201
Ֆաքս (+37441) 32-849
էլ. փոստ caritas@cararm.am

Երևանի գրասենյակ՝
Արաբկիրի 38, տուն 2"Ա"
Հեռախոս (+3741) 26-20-34, 26-63-11
էլ. փոստ caryl@web.am

Գավառի գրասենյակ՝
Թումանյան 22
Հեռախոս (+37464) 2-17-94
էլ. փոստ cargeghl@web.am

Լուսանկարները՝
Գևորգ Բաբայանի

ԹՐԱՖԻՔԻՆԳ

Մարդկանց վաճառք

Թրաֆիքինգը Հայաստանում. *օրենսդրական դաշտը*

Թրաֆիքինգը (մարդկանց առևտուրը) որպես երևույթ Հայաստանի իշխանությունների ուշադրությանն արժանացավ միայն 2002թ., երբ ԱՄՆ Պետդեպարտամենտը Կոնգրեսին ներկայացրած «Աշխարհում մարդկանց վաճառքի իրավիճակի մասին» տարեկան հաշվետվությունում Հայաստանը դասեց երրորդ կարգի երկրների շարքում, որոնք ուշադրություն չեն դարձնում երևույթին և համապատասխան կանխարգելիչ քայլեր չեն ձեռնարկում:

Այսօր իրավիճակն այլ է:
Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002թ. հոկտեմբերի 14-ի թիվ 591-Ա որոշման համաձայն ստեղծվեց Միջգերատեսչական հանձնաժողով, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղավորման ու առուվաճառքի հետ կապված հարցերն ուսումնասիրելը և առաջարկներ ներկայացնելը:

2003 թ. մարտի 25-ին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան» և դրան կից «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և պատժի մասին» և «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» արձանագրությունները: ՀՀ նոր Քրեական օրենսգրքի թիվ 132 հոդվածի համաձայն մարդկանց առևտուրը քրեորեն պատժելի է:

Ապօրինի միգրացիա.
ինչու՞ է խոցելի ապօրինի միգրանտը

(նյութը փրամադրել է Հայաստանում Միգրացիայի Միջազգային Կազմակերպությունը)

Անկանոն միգրացիայի տեսանկյունից Հայաստանը ելքի, որոշ չափով էլ տարանցիկ երկիր է: 1991թ. ի վեր 4 մլն-ից էլ պակաս ընդհանուր բնակչություն ունեցող Հայաստանից համեստ հաշվարկներով արտագաղթել է 800 հազարից մինչև 1 մլն. մարդ՝ ինչպես օրինական, այնպես էլ ապօրինի ճանապարհներով:

1998թ. Եվրոպական կոնվենցիան ապօրինի փոխադրումները սահմանել է հետևյալ կերպ. «Միգրանտների անօրինական սահմանահատումները» ներառում են «գործողություններ, որոնց նպատակն է ֆինանսական շահ ստանալու համար միտումնավոր օժանդակել օտարերկրացուն՝ մուտք գործել Պետության տարածք, ապրել ու աշխատել այնտեղ՝ խախտելով այդ երկրում գործող կանոններն ու պայմանները»:

•Արևմտյան Եվրոպայի երկրների մեծամասնությունում վիզաները տրվում են միայն 3 ամսով, ինչն այնտեղ աշխատելու իրավունք չի տալիս
•խստացվել է զարգացած շատ երկրների իմիգրացիոն վերահսկողությունը
•նվազել են միգրանտների՝ այդ երկրներում օրինական ապրելու և աշխատելու հնարավորությունները
•ապօրինի փոխադրողների մատուցած ծառայությունների դիմաց վճարելու արդյունքում միգրանտները հաճախ խրվում են պարտքերի մեջ կամ գույք են վաճառում:
•նրանք անպաշտպան են ճանապարհին ու կանգնած են արտաքսման վտանգի առաջ նպատակակետ երկրում:
•ինքը զոհը հետաքրքրված է դառնում այն բանում, որպեսզի խուսափի իշխանության ներկայացուցիչների հետ շփում ունենալուց, ինչն իրավական պաշտպանությունը զոհի համար անհնարին է դարձնում:

Ապօրինի միգրացիայից դեպի սպրկություն՝ մեկ քայլ է

Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ

Հայկական Կարիտաս- թրաֆիքինգից տուժածներին տրամադրում է տեղեկատվական և հյուրընկալող կենտրոն, կանխարգելման նպատակով Հայաստանի 3 մարզերի 100 դպրոցներում իրականացնում է ապօրինի միգրացիայի և թրաֆիքինգի կանխարգելման ծրագիրը, ուղղված թրաֆիքինգի խնդրի և դրա հետևանքների շուրջ աշակերտների իրազեկման բարձրացմանը:

IOM- աշխատում է տեղական, միջազգային ՀԿ-ների, պետական տարբեր օղակների հետ իրազեկելու նրանց թրաֆիքինգի դեմ մղվող պայքարի միջազգային ստանդարտների մասին և օգնելու թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային Ծրագրի իրականացման գործում:

ABA CEELI- ապահովում է տեխնիկական և իրավական աջակցություն Հայաստանում գործող միջազգային և տեղական տարբեր ՀԿ-ներին մարդկանց առևտրի դեմ պայքարի գործում: Նման աջակցություն տվյալ կազմակերպությունը ցուցաբերում է նաև Հայաստանի կառավարությանը:

UNDP/UMCOR- իրականացնում են «Օգնություն մարդավաճառության զոհերին և հոգատար հասարակության կառուցում» ծրագիրը, որի շրջանակում կատարվում են տեղեկատվական քարոզարշավներ, գործում է անվճար «թեժ գծի» հեռախոսահամար և «Վերականգնման և աջակցության Կենտրոն», որտեղ զոհերը ստանում են՝ ապաստան, բժշկական և հոգեբանական օգնություն, ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն:

«Հույս և օգնություն»- աջակցություն է ցուցաբերում մարդկանց առևտրից տուժածներին: ՀԿ-ի մասնագետները տուժածներին անվճար տրամադրում են բժշկական, հոգեբանական, իրավաբանական օգնություն: Ցանկության դեպքում տուժած անձինք անցնում են մասնագիտական ուսուցում: Կարիքի դեպքում տրամադրվում է ապաստարան:

Հայ Օգնության Միություն- հետազոտություն է անցկացնում որբանոցներում և գիշերօթիկ դպրոցներում պարզելու համար տեղեկացվածության աստիճանն այնտեղ թրաֆիքինգի խնդրի վերաբերյալ:

Հայկական Սոցիոլոգիական Ընկերակցություն- նախապատրաստում է սոցիոլոգիական նոր հետազոտություն, որը հնարավորություն կտա պատկերացում կազմել մեր երկրում թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի խմբերի և երևույթի տարածվածության մասին: